ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/45

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Ջրառ» ՓԲԸ

Բողոքաբեր՝ ԷԳՀԻ «Էներգակարգաբերում» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցում, էլեկտրական սարքավորումների կարգաբերման և ստուգման աշխատանքների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով ԷԳՀԻ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Մասնակից) կողմից 31.03.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Մասնակիցը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված «Դավիթշին» ՍՊԸ-ին ընթացակարգի 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը,

2. ընդունել որոշում ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել ԷԳՀԻ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 30.03.2020թ.-ին:

30.03.2020թ.-ին այն վերադարձվել է՝ բողոքում առկա խախտումները վերացնելու համար:

Բողոքը կրկին՝ վերադարձնելուց հետո Բողոքներ քննող անձին է մակագրվել 31.03.2020թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/45 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.04.2020թ.-ին:

2. <u>ԷԳՀԻ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

ԷԳՀԻ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն 31.03.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված՝ նաև հրապարակված, գնումների պլանն է, որը օրենքով սահմանված կարգով Պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում, իսկ տեղեկագիրը www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է: Ըստ այդմ արձանագրում ենք, որ ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-20/4 Ընթացակարգի հայտարարման պահին «Ջրառ» ՓԲԸ հրապարակված գնումների պլանով Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով գնման առարկայի նախահաշվային գինը նշված է եղել 2.500 000 ՀՀ դրամ, իսկ ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի հայտի գնային առաջարկը եղել 2 289 600 ՀՀ դրամ, որը չի գերազանցել գնման առարկայի նախահաշվային գինը, հետևաբար հիմքեր չեն եղել նախահաշվային գինը գերազանցելու պատճառով ԷԳՀԻ ՓԲԸ

«Էներգակարգաբերում» մասնաճյուղին բանակցությունների հրավիրելու: Դրա վերաբերյալ Պատվիրատուն իրենից պահանջված պարզաբանման մեջ չի ժխտել, որ Ընթացակարգին ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի ներկայացված հայտի գնային առաջարկը չի գերազանցել պաշտոնապես հրապարակված գնումների պլանում նշված գնման առարկայի նախահաշվային գինը, սակայն պատճառաբանել է, որ գնումների պլանում նշված գնման առարկայի նախահաշվային գինը չի համապատասխանել Ընթացակարգի հայտարարման պահին գնման առարկայի պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված գնման հայտի գնին (պարզաբանումը կից ներկայացվում է): Գտնում ենք, որ Ջրառ ՓԲԸ պատճառաբանությունը անհիմն է, քանի որ Ընթացակարգի իրավական հիմքը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջների դրույթներն են, որոնց բերված պատճառաբանությունը ուղղակի հակասում է:

2. Ըստ ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-20/4 Ընթացակարգի հայտերի բացման արձանագրությունների՝ 2-րդ չափաբաժնին ներկայացվել են ՀՀ դրամով նշված հետևյալ գնային առաջարկները՝

Մասնակցի անվանումը	*Ինքնարժեք*	*Շահույթ*	*ԱԱՀ*	*Ընդհանուր գինը*
«Էկրա Կովկաս» ՍՊԸ	*1 856 000*	*185 600*	*408 320*	*2 449 920*
ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում»	*1 800 000*	*108 000*	*381 600*	*2 289 600*
«Դավիթշին» ՍՊԸ	*2 200 000*	*242 000*		*2 442 000*
«Տքնսթաքշն» ՓԲԸ	*2 160 200*	*237 820*	*479 964*	*2 879 784*

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բավարար է համարել բերված աղյուսակի առաջին երեք մասնակիցների հայտերը, և առանց իրավական հիմքեր ունենալու պատճառաբանել է, որ այդ հայտերով գնային առաջարկները գերազանցում են գնման առարկայի նախահաշվային գինը և և նրանց հրավիրել է մրցակցային բանակցությունների: Բանակցություններին ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղն՝ ունենալով դրա իրավունքը՝ չի մասնակցել: «Դավիթշին» ՍՊԸ-ն բանակցությունների ժամանակ ներկայացրել է 1 600 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն բանակցությունների ժամանակ ներկայացրել է 1 750 000 ՀՀ դրամ գնային առաջարկ: Գնահատող հանձնաժողովը նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Դավիթշին» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից և կայացրել որոշում 2-

րդ չափաբաժնով կնքել պայմանագիր «Դավիթշին» ՍՊԸ-ի հետ: Ակնհայտ է, որ անհիմն անցկացրած մրցակցային բանակցությունների արդյունքում Ընթացակարգի հանձնաժողովը ընդունել է ՀՀ գնումների մասին օրենքին հակասող ևս մեկ անհիմն որոշում, քանի որ գնահատող հանձնաժողովը պետք է մերժեր բանակցություններին մասնակցած երկու մասնակիցների հայտերը՝ հիմք ընդունելով Գնումների մասին Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և Հրավերի 5.1-րդ կետը, քանի որ բանակցությունների ժամանակ մասնակիցները գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավունք չունեին նվազեցնելու գնային առաջարկով ներկայացված ինքնարժեքի գումարը, իսկ այդ փաստը Հանձնաժողովը պետք է գնահատեր որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և այդ հիմքով մերժեր մասնակիցների ներկայացրած հայտերը:»:

Վերոգրյալով պայմանավորված, ԷԳՀԻ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված «Դավիթշին» ՍՊԸ-ին ընթացակարգի 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը,

2. ընդունել որոշում ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել ԷԳՀԻ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ին:

3. <u>«Ջրառ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 01.04.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ջրառ» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ԷԳՀԻ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի կողմից 31.03.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 10.04.2020թ.-ի թիվ 327 գրությամբ ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 01.04.2020թ գրության ԷԳՀ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնում եմ, որ գնման առարկայի վերաբերյալ գնման գործընթացը կազմակերպվել է 2020 թվականի մարտի 13-ին՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված գնման հայտի հիման վրա: «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գնման առարկան ներառված է գնումների պլանում, որը

հաստատվել է 2020 թվականի հունվարի 31-ին և հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում: Գնումների պլանում ներառված են «Ջրառ» ՓԲԸ-ի 2020 թվականի գործունեության պահանջների բավարարման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները, որոնց համար հիմք են հանդիսացել համապատասխան տեղամասերի պետերի զեկուցագրերը, թերությունների տեղեկագրերը:

Գնման գործընթացի կազմակերպումն իրականացվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Լ որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 5-րդ բաժնով սահմանված պահանջներին համապատասխան:

Ինչ վերաբերում է ԷԳՀ «էներգակարգաբերում» ՓԲԸ մասնաճյուղի բողոքն այն մասին, որ ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-20/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով գնումների պլանում առկա գինը 2 500 000 ՀՀ դրամ է, իսկ իր գնային առաջակը ցածր է եղել գնումների պլանով սահմանված գնից և հիմքեր չկան բանակցությունների վարելու վերաբերյալ, տեղեկացնում եմ, որ տվյալ գնման առարկայի վերաբերյալ «Ջրառ» ՓԲԸ-ի գնումների պլանում առկա դարձիչ շարժիչի, տիրիստորային ընդարձակիչների, ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգման, կարգաբերման և ստուգման աշխատանքների համար նախատեսված գումարի չափը որոշվել է 2019 թվականի դեկտեմբեր ամսից մինչև 2020 թվականի հունվար ամիսն ընկած ժամանակահատվածում կատարված ուսումնասիրությունների արդյունքում կազմված թերությունների տեղեկագրերի հիման վրա: Մինչ գնման գործընթացի կազմակերպելը «Ջրառ» ՓԲԸ-ի համապատասխան աշխատակիցների կողմից կատարվել են որոշակի թույլատրելի աշխատանքներ, որի արդյունքում նվազել է կատարվելիք աշխատանքների ծավալը և, բնականաբար, գումարը: ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-20/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված գնման հայտի հիման վրա՝ ելնելով տեղում կատարված ուսումնասիրություններից և համեմատելով կազմված թերությունների տեղեկագրերը:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/45 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Ջրառ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից էլեկտրական սարքավորումների կարգաբերման և ստուգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.03.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 2-րդ չափաբաժնով գնման առարկա է հանդիսանում դարձիչ շարժիչի, տիրիստորային ընդարձակիչների, ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգման, կարգաբերման և ստուգման աշխատանքների ձեռքբերումը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 45221700/2:

www.gnumner.am կայքում 03.02.2020թ.-ին հրապարակված՝ «Ջրառ» ՓԲԸ-ի 2020 թվականի գնումների պլանի փոփոխություն և www.armeps.am/PPCM/ կայքում առկա տվյալների համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ դարձիչ շարժիչի, տիրիստորային ընդարձակիչների, ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգման, կարգաբերման և ստուգման աշխատանքների ձեռքբերման համար նշվել է 45221700/2, քանակը 1, իսկ գինը՝ 2 500 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի մասով հայտն են ներկայացրել նաև ԷԳՀԻ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն և «Դավիթշին» ՍՊԸ-ն:

ԷԳՀԻ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկով 2-րդ չափաբաժնի համար որպես առաջարկվող աշխատանքի ինքնարժեք նշել է 1 800 000 ՀՀ դրամ, ընդհանուր գին՝ 2 289 600 ՀՀ դրամ, իսկ «Դավիթշին» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի համար որպես առաջարկվող աշխատանքի ինքնարժեք նշել է 2 200 000 ՀՀ դրամ, ընդհանուր գին՝ 2 442 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 20.03.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 2-րդ չափաբաժնով որպես նախահաշվային գին նշվել է 2 166 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակիցների առաջարկված գները գերազանցում են նախահաշվային արժեքը, որոշել է նիստը կասեցնել մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Հանձնաժողովի 24.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ բանակցություններին մասնակցել է նաև «Դավիթշին» ՍՊԸ-ն և 2-րդ չափաբաժնի մասով առաջարկել է պայմանագիրն կատարել 1 600 000 ՀՀ դրամով:

Նույն արձանագրության համաձայն՝ 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Դավիթշին» ՍՊԸ-ն:

25.03.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-20/4» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից «Դավիթշին» ՍՊԸ-ի առաջարկած գինը կազմում է 1 600 000 ՀՀ դրամ:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ ԷԳՀԻ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի կողմից 31.03.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում

ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու

համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է: Այլ կերպ ասած, գնումների պլանի հաստատումը և/կամ հրապարակումը այն իրավական հիմքն է, որի առկայության պայմաններում է հնարավոր գնման գործընթաց սկսելը:

Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի և 5-րդ ենթակեի «ա» պարբերության համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում նախագահը (նիստը նախագահողը)

նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայմաններ, որոնցով սահմանվել են, որ այն պետք է

բաղկացած լինի ինքնարժեքի, շահույթի և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից և միևնույն ժամանակ ներկայացված գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ տեղեկատվություն է պարունակում նաև հրավերը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Ջրառ» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական սարքավորումների կարգաբերման և ստուգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.03.2020թ.-ին հայտարարված «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 2-րդ չափաբաժնով գնման առարկա հանդիսացող դարձիչ շարժիչի, տիրիստորային ընդարձակիչների, ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգման, կարգաբերման և ստուգման աշխատանքների ձեռքբերման համար որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշված է 45221700/2:

www.gnumner.am կայքում 03.02.2020թ.-ին հրապարակված՝ «Ջրառ» ՓԲԸ-ի 2020 թվականի գնումների պլանի փոփոխություն և www.armeps.am/PPCM/ կայքում առկա տվյալների համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ դարձիչ շարժիչի, տիրիստորային ընդարձակիչների, ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգման, կարգաբերման և ստուգման աշխատանքների ձեռքբերման համար նշվել է 45221700/2, քանակը 1, իսկ գինը 2 500 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի մասով հայտն ներկայացրած ԷԳՀԻ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկով 2-րդ չափաբաժնի համար որպես առաջարկվող աշխատանքի ինքնարժեք նշել է 1 800 000 ՀՀ դրամ, ընդհանուր գին՝ 2 289 600 ՀՀ դրամ, իսկ «Դավիթշին» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի համար որպես առաջարկվող աշխատանքի ինքնարժեք նշել է 2 200 000 ՀՀ դրամ, ընդհանուր գին՝ 2 442 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 20.03.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 2-րդ չափաբաժնով որպես նախահաշվային գին նշվել է 2 166 000 ՀՀ դրամ: Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակիցների առաջարկված գները գերազանցում են նախահաշվային արժեքը, որոշել է նիստը կասեցնել մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Հանձնաժողովի 24.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ բանակցություններին մասնակցել է նաև «Դավիթշին» ՍՊԸ-ն և 2-րդ չափաբաժնի մասով առաջարկել է պայմանագիրն կատարել 1 600 000 ՀՀ դրամով, ինչով պայմանավորված ճանաչվել է ընտրված մասնակից:

25.03.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-20/4» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից «Դավիթշին» ՍՊԸ-ի առաջարկած գինը կազմել է 1 600 000 ՀՀ դրամ:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ www.gnumner.am կայքում 03.02.2020թ.-ին հրապարակված՝ «Ջրառ» ՓԲԸ-ի 2020 թվականի գնումների պլանի փոփոխություն և www.armeps.am/PPCM/ կայքում առկա տվյալների համաձայն՝ որպես ԳՄԱ դասակարգման միջանցիկ (CPV) կոդ՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով նախատեսված դարձիչ շարժիչի, տիրիստորային ընդարձակիչների, ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգման, կարգաբերման և ստուգման աշխատանքների ձեռքբերման համար նշվել է 45221700/2, քանակը 1, իսկ գինը 2 500 000 ՀՀ դրամ:

Վերոնշյալների արդյունքում Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակցի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքներն հիմնավոր են, քանի որ 2-րդ չափաբաժնով աշխատանքի կատարման համար նախատեսված գումարը՝ ըստ գնումների պլանի, կազմում է 2 500 000 ՀՀ դրամ, իսկ ԷԳՀԻ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն առաջարկել էր պայմանագիրը կատարել 2 289 600 ՀՀ դրամով՝ ինչը չի գերազանցել աշխատանքների կատարման համար գնումների պլանով նախատեսված նախահաշվային արժեքը, որպիսի պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մասնակիցների հրավիրելով բանակցությունների, խախտել է Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի իմպերատիվ (պարտադիր) դրույթների պահանջները, վերջինիս գործողությունները իրավաչափ չեն և հակասում են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչը հանգեցնում է նաև Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների խախտմանը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ 1-ին չափաբաժնի մասով «Դավիթշին» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի

բաղադրիչը կազմել է 2 200 000 ՀՀ դրամ, սակայն տեղի ունեցած բանակցությունների արդյունքում վերջինս իր ներկայացրած գնային առաջարկը նվազեցրել է ոչ միայն նույն գնային առաջարկով ներկայացրած շահույթից, այլ նաև՝ արդեն հստակ նախատեսված ինքնարժեքից, որի արդյունքում 2-րդ չափաբաժնի մասով «Դավիթշին» ՍՊԸ-ի առաջարկած գինը կազմել է 1 600 000 ՀՀ դրամ:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-20/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ տալով «Դավիթշին» ՍՊԸ-ին ներկայացնել ինքնարժեքից ցածր գնային առաջարկ, գործել է ոչ իրավաչափ, քանի որ բանակցությունների ժամանակ մասնակիցները «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով առհասարակ իրավունք չունեն նվազեցնելու գնային առաջարկներով ներկայացված ինքնարժեքի գումարը, իսկ այդ փաստը Հանձնաժողովը պետք է գնահատի որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և այդ հիմքով մերժի մասնակիցների ներկայացրած հայտերը:

Հակառակ դեպքում խախտվում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ ցանկացած անձի՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Այն դեպքում, երբ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-20/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և Հրավերի 5.1-րդ կետի խախտումներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

ԷԳՀԻ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի կողմից 31.03.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/45 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել 24.03.2020թ.-ի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ 2-րդ չափաբաժնի մասով «Դավիթշին» ՍՊԸ-ին հաղթող/ընտրված/ ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումները:

2. կայացնել ԷԳՀԻ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով հաղթող/ընտրված/ ճանաչելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**